ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

2013 թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական քաղաքականություն....2
Զբոսաշրջություն....3
Քաղաքացիական ավիացիայի ոլորտի բարեփոխումներ....4
Տեղեկատվական տեխնոլոգիաներ (ՏՏ)....4
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ....5

Մաքսային Միությանն անդամակցության գործընթաց....6
Երկկողմ և բազմակողմ համագործակցություն....6
Արտաքին առևտուր....8
Օտարերկրյա ներդրումներ....8
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ....9

Գործարար միջավայրի բարելավման միջոցառումներ....9
Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն....10
Տեսչական բարեփոխումներ....10
Փոքր և միջին ձեռնարկատիրություն....10
Որակի ենթակառուցվածքներ....11
Մտավոր սեփականություն....11
Լիցենզավորում և թույլտվություններ....11
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ....12

## ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (Նախարարության) 2013 թվականի գործունեության ծրագրային հիմքը կազմել են ՀՀ նախագահի նախընտրական ծրագիրը, ՀՀ կառավարության ծրագիրը, ՀՀ կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները, ՀՀ կառավարության կողմից հաստատված առանձին ոլորտների զարգացման ծրագրերն ու հայեցակարգերը:

ՀՀ կառավարության 2013թ. հունվարի 10-ի թիվ 70-Ն և հուլիսի 18-ի թիվ 800-Ն որոշումներով սահմանված՝ ՀՀ կառավարության միջոցառումների ծրագրերով նախատեսված Նախարարության պատասխանատվությամբ 6 կետերը կատարվել են սահմանված ժամկետներում: Նշված որոշումներով ամրագրված՝ հաշվետու տարվա համար Նախարարության գործունեության առաջնահերթությունների օրակարգը ներառել է չորսական գերակա խնդիր, որոնց իրագործման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքների հաշվետվությունը ներկայացվում է ստորև:

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

### Արդյունաբերական քաղաքականություն

Արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում հաշվետու տարում աշխատանքներ են իրականացվել արդեն իսկ հաստատված 4 ոլորտային ռազմավարությունների (դեղագործության և բիոտեխնոլոգիաների, ճշգրիտ ճարտարագիտության, կոնյակագործության և գինեգործության) իրագործման ուղղությամբ: 2013թ. դեկտեմբերին հաստատվել է ևս 4 ոլորտային ռազմավարություն՝ «Հայաստանի տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի զարգացման ռազմավարությունը», «Հայաստանի կոշիկի արտադրության զարգացման ռազմավարությունը», «Ճշգրիտ ճարտարագիտության/ ճարտարագիտության ոլորտի 2012-2015թթ. գործողությունների ծրագիրը» և «Թեթև արդյունաբերության ոլորտի 2014-2016թթ. գործողությունների ծրագիրը»: ՀՀ էկոնոմիկայի նախարարի և Զարգացման հայկական գործակալության տնօրենի հրամաններով ձևավորվել են ոլորտային խորհուրդ և քարտուղարություն:

Աշխատանքներ են իրականացվել ներդրումներ կատարող արդյունաբերական ընկերություններին աջակցելու ուղղությամբ: Մասնավորապես, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի երկարաձգման գործիքի միջոցով աջակցություն է ցուցաբերվել 10 ընկերությունների, իսկ ներդրումային ծրագրի շրջանակներում 300 մլն դրամը գերազանցող ներմուծման դեպքում ԱԱՀ գումարների վճարումը մինչև 3 տարի հետաձգման գործիքի ներքո աջակցություն է տրամադրվել թվով 9 ընկերությունների:

Արդյունաբերական քաղաքականության միջոցառումների իրականացման 2013թ. պետական աջակցության ծրագրի շրջանակներում պետական բյուջեով հատկացվել է 463.7 մլն ՀՀ դրամ: Այս Ծրագրի շրջանակներում **արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում** գործիքի ներքո բավարարվել է թվով 8 ընկերությունների՝ 769 մլն դրամ ընդհանուր վարկի չափով հայտ, որոնք մոտ 29,6 մլն դրամով սուբսիդավորել է Արդյունաբերական զարգացման հիմնադրամը (ԱԶՀ): **Միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում գործիքի** շրջանակներում բավարարվել է թվով 6 ընկերությունների 7 հայտ՝ դեղագործության, ճշգրիտ ճարտարագիտության և գինեգործության ոլորտներում: **Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում գործիքի** շրջանակներում՝ 5 միջազգային ցուցահանդեսներում աջակցություն է ցուցաբերվել 128 տեղական ընկերությունների մասնակցության գծով, որոնց թվում՝ «Հայկական խաղողի հմայքը» խորագրով միջոցառումը Ստրասբուրգում ԵԽ Նախարարական կոմիտեում Հայաստանի նախագահության շրջանակներում, ՉԺՀ Ուրումչի քաղաքում «Չինաստան-Եվրասիա» երրորդ միջազգային ցուցահանդեսը, «Երևան շոու-2013» ոսկերչական միջազգային ամենամյա ցուցահանդեսը և այլն: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում 2014թ. ԱՄՆ Սան Ֆրանցիսկոյում Photonics West 2014 ցուցահանդեսին 3 ընկերությունների (LTPYRKAL, SPECTRALUS, ASTRA CRYSTALS), ՌԴ Մոսկվա քաղաքում «PRODEXPO» սննդի և խմիչքի միջազգային մասնագիտացված ամենամյա

ցուցահանդեսին հայկական ընկերությունների՝ մեկ համատեղ հովանոցային բրենդի ներքո մասնակցությունն ապահովելու ուղղությամբ: Քննարկման փուլում է գտնվում 2014թ. Դյուսելդորֆում կայանալիք «ProWine» մասնագիտացված ցուցահանդեսին մասնակցության հարցը:

Արտահանման զարգացման ենթակառուցվածքների կայացմանն ուղղված՝ 2013 թվականի հոկտեմբերին ՀՀ կառավարության թիվ 1129–Ա որոշմամբ հիմնադրվել է «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ (ՀԱԱԳ), որի հիմնական գործառույթը ապրանքներ և/կամ ծառայություններ արտահանողների ֆինանսական վնասի ապահովագրությունն է, մասնավորապես այն դեպքում, երբ օտարերկրյա գնորդը սահմանված ժամկետում չի կատարում տվյալ ապրանքի և/կամ ծառայության դիմաց վճարման իր պարտավորությունները:

## Զբոսաշրջություն

Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման, ենթակառուցվածքների զարգացման և միջազգային շուկայում մրցունակության բարձրացման նպատակով քաղաքականության միջոցառումներից հաշվետու տարում կարևորվում է հյուրանոցների «5 աստղանի Դելյուքս» որակավորման կարգի ներդրմանն ուղղված օրենսդրական փոփոխությունները, ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի մրցունակության բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:

ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ԱՄՀ, USAID EDMC ծրագրի և GIZ-ի հետ համագործակցությամբ Հայաստանի բոլոր սահմանային անցման կետերում տարվա սկզբից մեկնարկել և ամբողջ տարվա ընթացքում իրականացվում է զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտություն:

Զբոսաշրջության աջակցության ծառայություններ պետական ծրագրի ուղղությամբ 2013թ. հատկացվել է 50 մլն ՀՀ դրամ, որի ներքո ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման, ՀՀ զբոսաշրջային արդյունքի՝ միջազգային մրցունակության բարձրացման և արտաքին շուկաներում առաջխաղացման միջոցառումներ են իրականացվել: Ոլորտում **մարդկային ռեսուրսների զարգացման** նպատակով Զբոսավարների ասոցիացիաների համաշխարհային ֆեդերացայի (WFTGA) կողմից Երևանում զբոսավարների միջազգային կրթական կենտրոն հիմնելու որոշում է ընդունվել: Հյուրանոցային ծառայությունների ոլորտի Եվրոպական 35 երկրներից 150 կրթական հաստատություններ միավորող Եվրոդիպ «EURHODIP» կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում Երևանում անց է կացվել վերջինիս տնօրենների խորհրդի նիստը: Նախարարության աջակցությամբ կազմակերպվել է ամենամյա CTS միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը Երևանում, անցկացվել են արդեն ավանդական և ճանաչելի դարձած Գինու փառատոնը ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի, Ռինդ և Եղեգնաձոր համայնքներում և «Հայոց ավանդական տոնածիսական ուտեստների միցույթ փառատոնը» ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում:

2013թ. հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է ավելի քան 10 հեղինակավոր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում, կազմակերպվել են օտարերկրյա հեղինակավոր զբոսաշրջային օպերատորների և լրագրողների ճանաչողական այցեր Հայաստան: «National Geographic Traveler» ամսագրի ռուսական տարբերակի կողմից կազմակերպված լավագույն զբոսաշրջային ուղղության մրցույթի առցանց քվեարկության արդյունքներով Հայաստանը հաղթող է ճանաչվել «Տարվա հայտնություն» անվանակարգում: ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի 20-րդ նստաշրջանի շրջանակներում անցկացվող «Vettor Giusti» զբոսաշրջային պաստառների մրցույթում Հայաստանի «Քարերի Սիմֆոնիա» պաստառը Եվրոպական տարածաշրջանի լավագույն պաստառն է ճանաչվել:

Ստորագրման փուլում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՉԺՀ Զբոսաշրջության ազգային ադմինիստրացիայի միջև փոխըմբռնման հուշագիրը, որով Հայաստանին շնորհվում է «Երաշխավարված զբոսաշրջային երկիր» կարգավիճակ (Approved Destination Status-ADS)՝ Չինաստանից զբոսաշրջային խմբերով այցելությունների կազմակերպումն ապահովելու նպատակով:

Ներկայումս քննարկվում է Իրաքի քաղաքացիների համար վիզային ռեժիմի դյուրացման հարցը: Համագործակցության համաձայնագրեր, հուշագրեր, գործողությունների ծրագրեր են ստորագրվել

Իսպանիայի, Եգիպտոսի, Ուրուգվայի և Ռուսաստանի հետ:

2013թ. Հայաստանը մեկ տարի ժամկետով ստանձնել է ԱՊՀ անդամ պետությունների Զբոսաշրջության Խորհրդի նախագահությունը: 2014թ. ԱՊՀ երկրներում հայտարարվել է Զբոսաշրջության տարի և դրա շրջանակներում Հայաստանի նախագահությամբ Հայաստանում նախատեսվում է կազմակերպել մի շարք միջոցառումներ:

## Քաղաքացիական ավիացիայի ոլորտի բարեփոխումներ

2013թ. մեկնարկեցին քաղաքացիական ավիացիայի և օդային հաղորդակցության բնագավառի բարեփոխումները: Մշակվեց և 2013թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց Հայաստանում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագիրը, ծրագրի իրականացման միջոցառումները, որով Հայաստանը հռչակեց բաց երկնքի քաղաքականություն:

Բարեփոխման իրականացման նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ ձևավորվել է Աշխատանքային խումբ, որի ղեկավարն է ՀՀ էկոնոմիկայի նախարարը: Ծրագրի իրականացմանն օժանդակելու նպատակով համագործակցություն է հաստատվել ԱՄՆ ՄԶԳ հետ: Այդ շրջանակներում աշխատանքային խմբին խորհրդատվական աջակցություն է ցուցաբերում միջազգային և տեղական փորձագետներից կազմված թիմը:

Աշխատանքային խմբի նիստերում քննարկվել են հետագա աշխատանքների ճանապարհային քարտեզի մշակման, հաղորդակցության բնագավառում միջպետական բանակցությունների վարման, քաղաքացիական ավիացիայի ոլորտը կանոնակարգող ինստիտուցիոնալ նոր կառուցվածքի նախագծման հետ կապված հարցեր, սահմանվել են նախանշված ուղղություններով աշխատանքների իրականացման ժամկետներն ու ձևաչափը, հաստատվել է Աշխատանքային խմբի աշխատակարգը: Նախատեսվում է, որ 2014թ. առաջին եռամսյակի ավարտին ձևավորված կլինեն քաղաքացիական ավիացիայի ոլորտը կանոնակարգող ինստիտուցիոնալ նոր միավորները, իսկ տարվա կեսին՝ այդ միավորներում ներդրված կլինեն անհրաժեշտ բիզնես գործընթացները:

Բանակցություններ են մեկնարկել բաց երկնքի քաղաքականության շրջանակներում օտարերկրյա պետությունների հետ օդային հաղորդակցության բնագավառում պայմանագրերի վերանայման շուրջ: 2013թ. դեկտեմբերին կայացել է Հայաստանի և ՌԴ ավիացիոն իշխանությունների միջև հերթական խորհրդակցությունը, որի արդյունքում ստորագրված Արձանագրությամբ երկու երկրների միջև քաղաքացիական ավիացիայի ոլորտում հաստատվել է առավել ազատական ռեժիմ:

## Տեղեկատվական տեխնոլոգիաներ (ՏՏ)

ՏՏ ոլորտի խթանման պետական աջակցության ծրագրի շրջանակներում պետական բյուջեից 2013թ. հատկացվել է 80 մլն. ՀՀ դրամ:

**Ինովացիոն ենթակառուցվածքների** (հետազոտական, կրթական կենտրոններ, տեխնոպարկեր, լաբորատորիաներ, աքսելերատորներ և այլ ենթակառուցվածքային միավորներ) ձևավորման և տարածքային համաչափ զարգացման ուղղությամբ ՏՏ ոլորտում իրականացվում են մի շարք նախաձեռնություններ, մասնավորապես՝

- ✧ Ընթացքի մեջ են Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնման և Կապանի մոբայլ լուծումների լաբորատորիայի ստեղծման ծրագրերը, ավարտվել է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի շինարարությունը,
- ✧ Համաշխարհային բանկի հետ գործընկերությամբ իրականացվող «Էլ. հասարակություն և նորարարություն մրցունակության համար» վարկային ծրագրի շրջանակներում 2013թ. Հայաստանում հիմնվել է առաջին վենչուրային հիմնադրամը՝ ուղղված ոլորտում նորարարական գաղափարների գեներացմանն ու սկսնակ ընկերությունների ձևավորման խրախուսմանը,
- ✧ նույն ծրագրի շրջանակներում 2013թ. իրականացվել է ՀՀ-ում առաջին հավաստագրման կենտրոնի

գործարկումը,

- ✧ իրականացվում է Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի հիմնման ծրագիրը, որի շրջանակում 2014թ. շահագործման կհանձնվի Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնը,
- ✧ շարունակվում է ՀՀ ամբողջ տարածքում «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի իրականացումը:

**Օրենսդրական դաշտի բարելավման, ոլորտի աջակցման և էլեկտրոնային հասարակության կայացմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովման նպատակով՝**

- ✧ մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի ոլորտի կարգավորմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի փաթեթը,
- ✧ տարածաշրջանում երկրի SS ոլորտի մրցունակության բարձրացման նպատակով նախաձեռնվել է ոլորտի պետական աջակցությանն ու ոլորտին արտոնությունների տրամադրմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակման գործընթաց, որը կխթանի ներդրումների ներգրավմանը, սկսնակ ընկերությունների ձևավորմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- ✧ մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության կայացմանն ուղղված 2013-2015թթ. միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

**Ոլորտը բարձրորակ մասնագետներով զինելու և որակյալ աշխատուժով ապահովելու նպատակով՝**

- ✧ շարունակվել են բարձրորակ կրթական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքները պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքով հիմնված ուսումնական կենտրոնների/լաբորատորիաների շրջանակներում, այդ թվում՝ Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնը, Սիսկո տարածաշրջանային ակադեմիայի ծրագրերը,
- ✧ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում տեղի է ունեցել «mLab ECA» մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի նոր տարածքի և Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիաների (ANEL) պաշտոնական բացման արարողությունը:

**SS ոլորտում հեղինակավոր անդրազգային ընկերությունների ներգրավման ուղղությամբ ընթացող աշխատանքների շրջանակներում** «IBM», «GFI» և «Oracle» ընկերությունների հետ ստորագրվել են փոխըմբռնման հուշագրեր, որոնք նախատեսում են, մասնավորապես Հայաստանում հիմնել «IBM» նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոն, «Oracle» գերազանցության կենտրոն, «GFI» ընկերության հետ՝ ինովացիոն էկոհամակարգի զարգացման, սկսնակ SS ընկերությունների ենթակառուցվածքի ստեղծման, Հայաստանը որպես տարածաշրջանային հանգույցի դիրքավորման և կարողությունների զարգացման կրթական/հետազոտական ծրագրեր իրականացնել: Բանակցություններ են վարվում վերազգային այլ ընկերությունների ներգրավման ուղղությամբ:

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. հունվար-նոյեմբերին արդյունաբերական արտադրանքը կազմել է 1109.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով՝ 7.2 %-ով: 2013թ. ինն ամսվա տվյալներով ՀՆԱ կառուցվածքում արդյունաբերության մասնաբաժինը կազմել է 17.5%: 11 ամսվա տվյալներով արտահանվել է 412.6 մլրդ դրամի արտադրանք:

2013թ. հունվար-սեպտեմբերին Հայաստան է ժամանել 677906 զբոսաշրջիկ՝ 2012թ. նկատմամբ աճելով 12.4%-ով: Ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 587307 հազար՝ 2012թ. նկատմամբ աճելով 38.2%-ով: Զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության նախնական տվյալների համաձայն՝ զբոսաշրջիկների տեսակարար կշիռը հանրապետություն ընդհանուր այցելությունների մեջ աճել է՝ կազմելով շուրջ 46%: Կանխատեսվում է, որ տարեկան ցուցանիշը կկազմի շուրջ 45%, իսկ հանրապետություն ընդհանուր այցելությունների թիվը կաճի 10%-ով: Այս արդյունքների հիման վրա կարելի է գնահատել, որ 2013թ. Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կհատի

**մեկ միլիոնի** սահմանագիծը: «2013 թվականի զբոսաշրջության մրցունակության զեկույցի» համաձայն Հայաստանի դիրքը 2012թ. Գնահատմամբ բարելավվել է 11 տեղով: Հայաստանը զբոսաշրջության մրցունակությամբ 79-րդ է 140 երկրների շարքում:

2013թ. ինն ամսվա դրությամբ ՏՏ ոլորտում ընկերությունների թիվն աճել է շուրջ 4.0%-ով, աշխատուժի ծավալը՝ մոտ 10.0%-ով: Տեղեկատվության և կապի ցուցանիշի աճը 2013թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 9.6%:

## ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

### Մաքսային Միությանն անդամակցության գործընթաց

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյանի՝ Մաքսային միությանը (ՄՄ) և Միասնական տնտեսական տարածքին (ՄՏՏ) Հայաստանի անդամակցելու որոշման վերաբերյալ ս.թ. սեպտեմբերի 3-ին արված պաշտոնական հայտարարությունից անմիջապես հետո Նախարարությունն իրականացնում է նպատակաուղղված գործունեություն՝ համապատասխան աշխատանքների կազմակերպման և համակարգման ուղղությամբ:

ՄՄ-ին Հայաստանի միանալու ուղղությամբ աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծված 22 ոլորտային աշխատանքային խմբերից 7-ը (սակագնային կարգավորման, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության և երրորդ երկրների միջև առևտրային քաղաքականության, ոչ սակագնային կարգավորման, տեխնիկական կարգավորման, արդյունաբերական, ծառայությունների և ներդրումների, ինչպես նաև հակադեմպինգային քաղաքականության հարցերով) ղեկավարվում են Նախարարության կողմից: ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանը ՀՀ վարչապետի կողմից նշանակվել է ՀՀ լիազոր ներկայացուցիչ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում (ԵՏՀ) և նոյեմբեր ամսից մասնակցել է ԵՏՀ նիստերին: Աշխատանքային խմբերը ԵՏՀ համապատասխան մասնագետների հետ համագործակցությամբ մշակել են ՄՄ-ին և ՄՏՏ-ին անդամակցելու ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծրագրի նախագծերը («ճանապարհային քարտեզը»): Վերջիններս ամփոփվել և ներկայացվել են 2013 թ. դեկտեմբերի 12-ին ԵՏՀ նիստի քննարկմանը: 2013թ. դեկտեմբերի 24-ին ԵՏՀ բարձրագույն Խորհրդի նիստում հաստատվեց ՄՄ և ՄՏՏ Հայաստանի անդամակցության Ճանապարհային քարտեզը:

Նախարարության կողմից Հայաստանում անց են կացվել թվով 10 խորհրդակցություն և կոնֆերանս, կատարվել 5 գործնական այցեր, այդ թվում՝ Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Մինսկ և Կազան: Ներկայումս նախապատրաստվում են ևս մի շարք հանդիպումներ և աշխատաժողովներ, մասնավորապես՝ տեխնիկական կանոնակարգման, ծառայությունների և ներդրումների ոլորտներում:

Լայնածավալ աշխատանքներ են տարվել Հայաստանի և ՄՄ ու ՄՏՏ նորմատիվաիրավական և իրավապայմանագրային դաշտի ուսումնասիրման, համեմատման, վերլուծությունների և հնարավոր խնդիրների բացահայտման ուղղությամբ: Ուսումնասիրվել են գործող մաքսատուրքերի դրույքաչափերը, ՀՀ-ում մաքսատուրքերի և գործող տեխնիկական կանոնակարգերի փոփոխության և ՄՄ-ին անդամակցության արդյունքում որոշ ապրանքների մասով պաշտպանական միջոցների կիրառման անհրաժեշտությունը, մշակվել է այն զգայուն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ անցումային ժամանակահատվածում անհրաժեշտ է կիրառել պաշտպանական միջոցներ:

Նախարարությունն ակտիվորեն մասնակցում է Հայաստանի՝ Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին անդամակցության Պայմանագրի նախագծի մշակման աշխատանքներին:

### Երկկողմ և բազմակողմ համագործակցություն

2013թ. ընթացքում կատարվել են 62 երկկողմ և 18 բազմակողմ համաձայնագրերի ուսումնասիրման, փորձաքննության, խմբագրման, տեքստերի թարգմանության, ներպետական համաձայնեցման, վավերացման գործընթացի իրականացման, ստորագրման նախապատրաստման աշխատանքներ:

Նախապատրաստվել և անց են կացվել՝

- Նախարարության իրավասության ներքո գտնվող միջկառավարական հանձնաժողովների 5 նիստեր՝ հայ-լեհական, հայ-չինական, հայ-լատվիական, հայ-բելառուսական, հայ-ուկրաինական,
- ՀՀ և Մաքսային միության, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքի միջև համագործակցության հնարավորության ուսումնասիրման հանձնաժողովի 3 նիստ,
- 2013թ. հունիսի 21-ին Ուրումչի քաղաքում Նախարարության և ՉԺՀ Սինցզյան-Ույգուրյան Ինքնավար Շրջանի միջև առևտրատնտեսական համագործակցության աշխատանքային խմբի առաջին նիստը:

Մշակվել և 2013թ. դեկտեմբերի 2-ին ստորագրվել է ՀՀ և ՌԴ մինչև 2020թ. երկարատև տնտեսական համագործակցության Ծրագրի իրականացման Միջոցառումների պլանը:

2013թ. Նախարարությունում մեկնարկել են դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման աշխատանքները: Նախարարության ակտիվ ներգրավվածությամբ ձևավորվել է Համաշխարհային Բանկի հետ Հայաստանի քառամյա գործընկերության նոր ռազմավարությունը, որը 2013թ. հոկտեմբերին հաստատվել է ՀԲ Խորհրդի կողմից: Զարգացման քաղաքականությունների մշակման և դրանց արդյունավետ իրականացման գործում ռազմավարական համագործակցություն է հաստատված Արժույթի միջազգային հիմնադրամի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, ՄԱԿ-ի կառույցների, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Գերմանիայի միջազգային զարգացման ընկերակցության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հետ:

Դոնոր կառույցների հետ համագործակցության խորացման և գլոբալ հարթակներում Հայաստանի ներկայացվածության ապահովման նպատակով նախարարությունը համակարգել է Բուսանի Գլոբալ գործընկերության հռչակագրից բխող՝ Աջակցության արդյունավետության գլոբալ մոնիտորինգի ազգային գործողությունները: Նախնական արդյունքները ներկայացվել են մոնիտորինգի գլոբալ համակարգումն իրականացնող ՄԱԶԾ/ՏՀԶԿ միասնական թիմին՝ Աջակցության արդյունավետության գլոբալ զեկույցում ներառելու նպատակով:

**Եվրոպական Միության և ԱՀԿ ուղղությամբ՝**

ԵՄ հետ Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտի (ԽՀԱԱԳ) բանակցությունների մեկնարկից հետո /7 փուլերի ընթացքում/ մեծածավալ աշխատանք է տարվել ՀՀ-ԵՄ երկկողմ ապրանքների ու ծառայությունների առևտրին և առևտրի կանոններին վերաբերվող մի շարք ոլորտներում բանակցություններ իրականացնելու ուղղությամբ: 2013թ. ԽՀԱԱԳ համաձայնագիրն ամբողջությամբ բանակցվեց և համաձայնեցվեց եվրոպական կողմի հետ: Զուգահեռաբար շարունակվել է ԽՀԱԱԳ ներքո ոլորտային բարեփոխումների ծավալուն գործընթացը:

Կազմակերպվել են ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի և «Առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով» ենթակոմիտեի նիստեր, մասնակցություն է ապահովվել ԵՄ Արևելյան գործընկերության «Տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին մոտարկման» պլատֆորմի և վերջինիս թեմատիկ պանելների աշխատանքներին:

Իրականացվել է 2012-2013թթ. Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) միջոցառումների ցանկով նախատեսված աշխատանքների շարունակական /եռամսյա փուլային/ մոնիտորինգ: ԵՄ կողմից 2013թ. մարտին հրապարակված 2012թ. ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացի զեկույցում ամրագրվել է, որ Հայաստանը առաջընթաց է գրանցել առևտրատնտեսական համագործակցության գրեթե բոլոր առաջնային ոլորտներում:

Մաքսային միությանը ՀՀ միանալու գործընթացների շրջանակներում կատարվել է ԱՀԿ ընթացակարգերի հետ համապատասխանության և ՀՀ-ԱՀԿ պարտավորությունների (մասնավորապես մաքսատուրքերի մասով) համեմատական վերլուծություն:

Շարունակվել են ԽՀԱԱԳ-ին և Պետական ֆինանսների կառավարման ոլորտներին վերաբերող ԵՄ Բյուջետային աջակցության Ծրագրերը: Դրամաշնորհի տեսքով 2013թ. ՀՀ պետական բյուջե է փոխանցվել մոտ 12 մլն եվրո: Արդարադատության ոլորտին վերաբերող 29 մլն եվրո արժեքով և

կրթության ոլորտին վերաբերող 6 մլն եվրո արժեքով երկու համաձայնագիր գտնվում են ստորագրման և վավերացման տարբեր փուլերում:

2013թ. հաջողությամբ ավարտվել է 5 Թվինինգ ծրագիր /ՀՀ ԷՆ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ ԷՆ շուկայի վերահսկողության պետական տեսչություն, ՀՀ մրցակցության պետական հանձնաժողով, ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն/: Գործընկեր ԵՄ անդամ-պետություն են ընտրել ու պայմանագրի մշակման փուլում են 2 Թվինինգ ծրագիր /ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն/: Մշակվել ու ԵՄ հանձնաժողովի հաստատմանն են ուղարկվել 2 Թվինինգ ծրագրերի նկարագրեր, ևս 2-ը վերջնականացվել են: Ամփոփվել և ավարտին է հասցվել մոտ 31 Թայեքս միջոցառում: Սիգմա ծրագրի մասով իրականացվել են պետական գնումների գործընթացի բարեփոխումներ, պետական ներքին ֆինանսական հսկողություն, քաղաքացիական ծառայության և պետական կառավարման համակարգի բարեփոխումներ, օժանդակություն ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին ծրագրերը: Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի շրջանակներում ավարտվել են հայկական շահառուների մասնակցությամբ 2 ծրագրեր, իրականացման փուլում են 18-ը:

## Արտաքին առևտուր

Պատրաստվել է 2014թ. հունվարից ԵՄ «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմից օգտվելու համար անհրաժեշտ պաշտոնական հայտը և կից փաստաթղթերի փաթեթը, ներկայացվել Եվրոպական Հանձնաժողով: Եվրոպական Խորհրդարանի Միջազգային առևտրի հանձնաժողովի կողմից 2013թ. հոկտեմբերին հավանության է արժանացել առևտրային ռեժիմից օգտվելու հնարավորություն ընձեռող փաստաթուղթը, որով 10 երկիր, այդ թվում և Հայաստանը, հնարավորություն կունենան օգտվել այդ ռեժիմից և հայկական ծագման մեծ թվով ապրանքներ կշարունակեն ԵՄ շուկա արտահանվել զրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով:

Ազատ առևտրի ռեժիմ ունեցող երկրների ցանկը ընդլայնելու և ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի առկա վարչարարական խոչընդոտները նվազեցնելու ուղղությամբ՝

- 2013թ. լրացում է կատարվել «Ազատ առևտրի գոտու մասին» 2011թ. հոկտեմբերի 18-ի Պայմանագրում, ըստ որի Պայմանագրին միացել է նաև Ուզբեկստանը:
- Հայաստանի առաջարկությամբ ազատ առևտրի գոտու շրջանակներում մինչև 5000 ԱՄՆ դոլարի արժողությամբ ապրանքների ներմուծման ժամանակ տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռվում ծագման երկրի հավաստումը կատարել ինքնահայտարարագրման եղանակով, առանց առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրվող CT-1 ձևի սերտիֆիկատի ներկայացման: Հարցի առնչությամբ Ծագման երկրի կանոնների մասին Համաձայնագրում կատարվել է համապատասխան փոփոխություն:

## Օտարերկրյա ներդրումներ

Նախաձեռնվել է ՀՀ ներդրումային քաղաքականության վերանայման գործընթացը (այդ թվում Twinning գործիքի, Համաշխարհային Բանկի փորձագետների և OECD հետ ոլորտային փորձագիտական հետազոտություններ իրականացման շրջանակներում), որի արդյունքում նախատեսվում է ներդրումների խթանման նոր գործիքների ներդնել և բացահայտել նոր ներդրումային հնարավորություններ: Համագործակցություն է իրականացվում նաև EDMC ծրագրի հետ՝ ոլորտային ներդրումային ուղեցույցների մշակման ուղղությամբ:

Շարունակվում են աշխատանքները կոնկրետ ներդրումային ծրագրերի իրականացման համար, այդ թվում՝ ԶՀԳ և Արդյունաբերության Զարգացման Հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել կամ մասնակցություն է ցուցաբերվել գործարար համաժողովներ(ին) և գործարար համայնքի ներգրավմամբ միջոցառումներ(ին) («Հարկային և մաքսային հարցերի պարզաբանումներ սիրիահայ գործարարների համար» միջոցառում, հայ-սլովակական, հայ-չեխական, հայ-իրանյան, հայ-իրաքյան, հայ-

արգենտինական գործարար ֆորումներ, հայ-լիբանանյան գործարար և ռուս-հայկական միջտարածաշրջանային ֆորումների կոորդինացման աշխատանքներ):

Մասնավոր հատվածից հավաքագրվել է տարբեր ոլորտների մոտ 20 ներդրումային ծրագիր, բերվել միասնական ձևաչափի և տարբեր կապուղիներով ներկայացվել օտարերկրյա ներդրողներին:

2013թ. օգոստոսի 1-ին գործարկվել է «Այյանս» ազատ տնտեսական գոտին: Առավելագույնը մինչև 2014թ. հունվար-փետրվար նախատեսվում է ստեղծել ևս մեկ ազատ տնտեսական գոտի ոսկեգործության, ակնագործության և ժամագործության ոլորտներում:

2014թ. ԱԶԲ և UNIDO աջակցությամբ նախատեսվում է անցկացնել խոշոր միջազգային ներդրումային ֆորում (ընդհանուր բյուջեն՝ մոտ 1 մլն ԱՄՆ դոլար):

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2013թ.հունվար-նոյեմբերին արտաքին առևտրաշրջանառության աճը կազմել է 5.2%, արտահանման աճը՝ 8.4%, իսկ ներմուծմանը՝ 4.2%: Արտահանման գծով հիմնական գործընկերներն են՝ Ռուսաստանը, Բելգիան, Բուլղարիան, Իրանը, ԱՄՆ:

2013թ. հունվար-սեպտեմբերին իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքը կազմել է 395.6 մլն ԱՄՆ դոլար, որից ուղղակի ներդրումներ են՝ 155.1 մլն դոլարը, նվազելով համապատասխանաբար 31.7 և 62.1 տոկոսով: Ներդրումներն իրական հատվածում կատարվել են հիմնականում Արգենտինայից (89.8 մլն), Կիպրոսից (58.7 մլն), Ռուսաստանից (52.8 մլն), Կանադայից (42.7 մլն), և Ֆրանսիայից (41.1 մլն): Ներդրումները հիմնականում ուղղվել են հանքագործության (122.1 մլն), օդային տրանսպորտի գործունեության (82.5 մլն), հեռահաղորդակցության (48.4 մլն) և մշակող արդյունաբերության (34.1 մլն) ոլորտներ: Օտարերկրյա ներդրումների նվազումը հիմնականում պայմանավորված է Ֆրանսիայից, Շվեյցարիայից և Կանադայից իրական հատվածում կատարված ներդրումների անկմամբ՝ համապատասխանաբար 81.6, 85.7 և 58.2%-ով:

## ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

### Գործարար միջավայրի բարելավման միջոցառումներ

2013թ. ընթացքում Նախարարությունը համակարգել է գործարար միջավայրի բարելավման ծրագրով նախատեսված 50 միջոցառումների իրականացումը և հաշվետվողականությունը: Իրականացվում է գործարար միջավայրի բարելավման խոչընդոտների ուսումնասիրման, բացահայտման և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքներ:

Իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում 2013թ. ուսումնասիրվել են շուրջ 360 իրավական ակտերի նախագծեր, որոնցից 13%-ին (թվով 47) տրվել է տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում դրական ազդեցությամբ, իսկ 9.7%-ին (թվով 35)՝ բացասական ազդեցությամբ եզրակացություն: Վերջիններս նախագծողների կողմից լրամշակվելուց հետո միայն ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը:

Հաստատվել է ՀՀ-ում իրավական ակտերի ազդեցության գնահատման (RIA) համակարգի կատարելագործման հայեցակարգը և դրա արդյունավետ կիրարկման ապահովմանն ուղղված միջոցառումների ցանկը: Մշակվել է ազդեցության գնահատման մեթոդական ցուցումների ուղեցույց, որը կներառի իրավական ակտերի ազդեցության գնահատման «ծախսեր-օգուտներ» վերլուծության գործիքի մեթոդաբանությունը:

Իրականացվել են իրավական ակտերի կիրարկումից առաջացող վարչարարական ծախսերի գնահատման աշխատանքներ՝ օգտագործելով վարչարարության գնահատման և կրճատման միջազգային «Ստանդարտ ծախսերի մոդել» գործիքի մեթոդաբանությունը:

## Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն

«Իրական հատվածի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման հայեցակարգին և գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 14-ի թիվ 47 արձանագրային որոշմամբ: Գործողությունների ծրագիրը ներառում է թվով 14 միջոցառում, և որոշման համաձայն պատասխանատու մարմինների կողմից նախատեսվում է սահմանված ուղղություններով հայեցակարգի իրագործում՝ սկսած 2014թ. առաջին եռամսյակից:

## Տեսչական բարեփոխումներ

Հաշվետու տարում շարունակվել են դեռևս 2009թ. մեկնարկած տեսչական բարեփոխումների իրականացման աշխատանքները:

Ապահովվել է մի շարք գերատեսչությունների ներքո գործող ծառայությունների և տեսչությունների (թվով 5) կողմից իրականացվող՝ ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունների և ստուգաթերթերի (թվով 53) ՀՀ կառավարության կողմից հաստատումը: Փորձարկվել են ստուգում իրականացնող մի շարք մարմինների (թվով 4) 121 ստուգաթերթեր: Տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի կողմից հավանության են արժանացել թվով 6 մարմինների թվով 40 ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունները:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի նախագիծը և «Շուկայի վերահսկողության մասին» օրենսդրական փաթեթը շահագրգիռ կողմերի մոտ շրջանառելուց հետո ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Աշխատանքներ են տարվել «Ստուգումների մասին» ՀՀ օրենքի նախագծի ուղղությամբ:

Տեսչությունների թիվը կրճատվել է մեկով. ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության:

Օպտիմալացման ծրագրի շրջանակներում 2013թ. հուլիսի 25-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Տեսչություններում կառավարման խորհուրդներ ստեղծելու մասին» թիվ 856-Ն որոշումը և տեսչություններում աշխատանքներ են տարվել որոշման պահանջը ապահովելու ուղղությամբ՝ որպես օպտիմալացման ծրագրի բաղկացուցիչ մաս:

## Փոքր և միջին ձեռնարկատիրություն

Ավարտական փուլում են ՓՄՁ զարգացման նոր ռազմավարության մշակման աշխատանքները:

2013թ. ընդլայնվել է փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցության ծավալները: ՓՄՁ պետական աջակցության ծրագրի ուղղությամբ պետական բյուջեից 2013թ. հատկացվել է 150,8 մլն. ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 17217 ՓՄՁ սուբյեկտի: Ընդ որում, Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն են ստացել 243 ՓՄՁ սուբյեկտ: «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից 2013թ. ընթացքում շուրջ 2.4 մլրդ ՀՀ դրամի չափով վարկավորում է տրամադրվել 31 իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (32 վարկ), հետևյալ ոլորտային բաշխվածքով. մշակող արդյունաբերության ոլորտին՝ 22 վարկ, գյուղատնտեսության ոլորտին՝ 4 վարկ, ծառայությունների մատուցման ոլորտին՝ 4 վարկ, առևտրի ոլորտին՝ 2 վարկ: Ձեռք է բերվել թվով 80 գյուղտեխնիկա և ֆինանսական վարձակալության (լիզինգ) է հանձնվել 47 ֆիզիկական անձանց: Լիզինգի ընդհանուր գումարը կազմում է շուրջ 260 մլն ՀՀ դրամ:

## Որակի ենթակառուցվածքներ

Իրականացվել է տեխնիկական կանոնակարգման, սանիտարական և ֆիտոսանիտարական ոլորտների՝ Մաքսային Միության և Հայաստանի համապատասխան օրենսդրության համեմատում, ոլորտի մասով մշակվել է Հայաստանի՝ ՄՄ անդամակցության ճանապարհային քարտեզը:

Փոփոխություններ են կատարվել հավատարմագրման համակարգը կանոնակարգող օրենսդրության մեջ, ինչը պետք է նպաստի փոխճանաչման համաձայնագրերի կնքմանը և արտահանման դյուրինացմանը: ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնց թվում՝ «Չափման միջոցը որպես ազգային չափանմուշ ճանաչելու վերաբերյալ» կարգը նպատակ ունի ապահովել չափման միջոցի ստուգաչափման և տեսակի հաստատման հետագծելիությունը: «Խաղալիքների անվտանգության» վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որտեղ արտացոլված են ԵՄ և ՄՄ օրենսդրությունների տարրեր, ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Իրականացվել է ՄՄ տեխնիկական կանոնակարգման ոլորտը կանոնակարգող 4 համաձայնագրերի և 32 տեխնիկական կանոնակարգերի ուսումնասիրություն: Արդյունքում բացահայտվել են միջազգային և եվրոպական օրենսդրությանը հակասող դրույթներ, որոնք քննարկվել են ԵՏՀ մասնագետների հետ՝ հակասություններին անհրաժեշտ լուծումներ տալու ուղղությամբ: Մշակվել է Մաքսային միության 4 տեխնիկական կանոնակարգեր, որոնք առաջարկվել են ընդունել որպես ազգային տեխնիկական կանոնակարգեր՝ բիզնեսին ավելի խորը ծանոթացնելու նպատակով:

**Ստանդարտների ազգային ինստիտուտի** ջանքերով հաշվետու տարում քաղաքաշինության, էներգետիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, սննդի արդյունաբերության, գյուղատնտեսության, համապատասխանության գնահատման ոլորտներում մշակվել, ընդունվել և գործողության մեջ են դրվել շուրջ 217 ստանդարտ, որոնցից 10՝ ՀՍՏ, 104՝ միջպետական և ԱՊՀ երկրների, 103՝ միջազգային ստանդարտներ: «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի համաձայն 2013թ. մշակվել է 80 ազգային ստանդարտ՝ պետական ամենամյա ծրագրին համապատասխան, որոնք ներդաշնակեցված են միջազգային պահանջներին:

**Հավատարմագրման ազգային մարմին ՊՈԱԿ-ը** ՀՀ միակ հավատարմագրման մարմինն է՝ ստեղծված 2013թ.: Իրականացվել են կառույցի գործունեությունն ապահովող օրենսդրական ակտերի մշակման աշխատանքները: Ներկայումս Հավատարմագրման ազգային մարմինն արդեն սկսել է հավատարմագրում իրականացնել միջազգային պահանջներին համաձայն, որի համար մի կողմից պետք հզորացնել Հավատարմագրման ազգային մարմնի կարողությունները, մյուս կողմից՝ հավատարմագրվող մարմինների կարողությունները: ԻՍՕ 17011 ստանդարտին պահանջներին համապատասխան հավատարմագրվել է համապատասխանության գնահատման 1 մարմին: Հավատարմագրման ազգային մարմինը նպատակ ունի դառնալ ԵՄ հավատարմագրման համագործակցության անդամ, որը նշանակում է Հավատարմագրման ազգային մարմնի կողմից տրված հավատարմագրման վկայագրերի ուղղակի ճանաչում ԵՄ հավատարմագրման համագործակցության անդամ պետությունների կողմից: Դա շեշտակիորեն դյուրինացնում է արտադրանքի արտահանումը այդ երկրներ:

## Մտավոր սեփականություն

2013թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ գործակալություն ներկայացվել է՝ գյուտի և օգտակար մոդելի 159 հայտ, ապրանքային նշանների 1641 հայտ՝ ազգային ընթացակարգով և 2747 ծանուցում՝ միջազգային ընթացակարգով արդյունաբերական նմուշի 32 հայտ՝ ազգային ընթացակարգով և 156 ծանուցում՝ միջազգային ընթացակարգով:

## Լիցենզավորում և թույլտվություններ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2013 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ՝

- Լիցենզավորվել են թվով 102 առևտրի իրականացման վայրեր:
- Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման

լիցենզավորմամբ գործունեություն են իրականացնում թվով 9 լիցենզավորված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր:

- Որակավորվել են թանկարժեք մետաղներ զտարկողների և թանկարժեք մետաղներ հարգորոշող ու հարգադրոշմող թվով 122 քաղաքացիներ:
- «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծման մասով գործունեություն են իրականացնում թվով 11 լիցենզավորված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր:
- «Ժամանակավոր ներմուծում (արտահանում)՝ վերամշակման համար» ռեժիմներով ներմուծված (արտահանված) ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկի վերաբերյալ տրամադրվել է 775 եզրակացություն, որից՝ 665 ներմուծման, 110 արտահանման:
- Անմշակ ալմաստի ներմուծման ժամանակ հաշվառվել է Քիմբերլի գործընթացի հավաստագրեր՝ թվով 152 հատ, անմշակ ալմաստի ընդհանուր քաշը՝ 169,476.89 կարատ, արժեքը 36,015,804.14 դոլար: Արտահանման ժամանակ տրամադրվել է Քիմբերլի գործընթացի հավաստագրեր՝ թվով 52 հատ, անմշակ ալմաստի ընդհանուր քաշը՝ 94,405.41 կարատ, արժեքը 7,116,727.48 դոլար:
- Որակավորման կարգ է ստացել 30 հյուրանոցային տնտեսության օբյեկտ, այդ թվում՝ 14 հյուրանոց, 1 պանսիոն և 15 զբոսաշրջային տուն: Շրջանառության մեջ է դրվել ՀՏՕ-ների որակավորման պայմաններին համապատասխանության պարբերական գնահատման և որակավորման կարգ չունեցող հյուրանոցային օբյեկտների նկատմամբ վերահսկողության մեթոդաբանություն:
- Հայաստանից երկակի նշանակության ապրանքներ արտահանելիս տրամադրվել են 1 անհատական և 1 ընդհանուր թույլտվություններ:
- Տրամադրվել են ներմուծման 17 հավաստագրեր և հաստատվել 12 վերջնական օգտագործողի հավաստագրեր:

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բանկի կողմից 2013թ. հոկտեմբերին հրապարակած՝ «Գործարարությամբ զբաղվելը 2014» վարկանշային զեկույցի տվյալներով՝ Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 37-րդ տեղը՝ զիջելով Բելգիային և առաջ անցնելով Ֆրանսիայից: Վերջին երեք տարիների (2011, 2012, 2013) զեկույցների տվյալներով Հայաստանի դիրքը բարելավվել է 24 կետով: Նշենք նաև, որ զեկույցի տվյալներով Հայաստանի գործարար միջավայրը լավագույնն է ԱՊՀ երկրների շարքում և երկրորդն է տարածաշրջանում՝ զիջելով միայն Վրաստանին:

Ձեռներեցության խթանմանը և ՓՄՁ զարգացմանն ուղղված հասցեական ծրագրերի միջոցով նախորդ տարվա համեմատ կրկնակի ավել աջակցություն տրամադրվել: Ընդ որում, տեղեկատվական և խորհրդատվական (15647 սուբյեկտ) և սկսնակ գործարարների ձեռներեցության (462 սուբյեկտ) գծով աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների թիվը կրկնակի գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը, իսկ վարկային երաշխավորություն (217 սուբյեկտ) ստացածներինը՝ 1.4 անգամ:

Նախարարության մատուցած ծառայությունների դիմաց պետական բյուջե 2013թ. մուտքագրվել է 602,4 մլն. դրամ, որի թվում հիմնական ուղղություններն են՝

- Մտավոր սեփականության պաշտպանության ոլորտ՝ 312,7 մլն. դրամ,
- Լիցենզավորման ենթակա գործունեություն՝ 254,5 մլն. դրամ,
- Իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցներ՝ 15,8 մլն. դրամ: